ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՄԵՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1967-1979ԹԹ.

Եմենի երկու հանրապետությունների՝ Եմենի Արաբական Հանրապետության /ԵԱՀ/ և Եմենի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության /ԵԺԴՀ/[1] քաղաքական հարաբերությունների պատմությունը սկզբնավորվում է 1967թ. նոյեմբերի 30-ին, երբ անգլիական զորքերը հեռացան Հարավային Եմենից և վերջինս հռչակվեց անկախ պետություն, և շարունակվում մինչև 1990թ. միասնական եմենական պետության ստեղծումը:

Միջեմենական հարաբերությունները բնորոշվել են ինչպես միմյանց նկատմամբ թշնամական՝ ընդհուպ մինչև պատերազմական գործողություններով, այնպես էլ իրական միասնությանն ուղղված քայլերով: Եմենի երկու հանրապետությունների ղեկավարները տարբեր ուղիներով և ձևերով հետամուտ են եղել միասնական Եմենի ստեղծմանը, որի հիմքում ընկած է եմենցի ժողովրդի պատմական ընդհանուր անցյալը: Սակայն հաճախ միասնության գաղափարը քողարկել է պայքարը քաղաքական երկու համակարգերի միջև: Կողմերը հանդես են եկել փոխադարձ մեղադրանքներով ու հավակնություններով[2]:

Երբ 1967թ. նոյեմբերին Հարավային Եմենը հռչակվեց անկախ պետություն, Հյուսիսում շարունակվում էր 1962թ. հեղափոխությունից հետո սկսված քաղաքացիական պատերազմը իշխանության եկած հանրապետական վարչակարգի կողմնակիցների և ընդդիմադիր միապետականների միջև: 1967թ. նոյեմբերի 5-ին նախագահ Աբդալլա աս-Սալալը հեռացվեց իշխանությունից: Աբդ առ-Ռահման ալ-Արիանին ստանձնեց նախագահի, Մուհսին ալ-Այնին՝ վարչապետի, Հասան ալ-Ամրին՝ զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը:

1967թ. դեկտեմբերին միապետության կողմնակիցները, փորձելով ռազմական ճանապարհով երկրում միապետական կարգեր հաստատել, շրջափակեցին Սանան, որի հետևանքով երկրում սկիզբ առավ ժողովրդական շարժում, որի մեջ ներգրավվեցին նաև Հյուսիսային Եմենի ձախ քաղաքական ուժերը: Նրանց մեջ մեծ հեղինակություն ուներ հատկապես արաբ ազգայնա-

կանների շարժումը, որ սերտ կապեր ուներ 1967թ. Հարավային Եմենում իշխանության եկած Ազգային Ճակատի* հետ:

Չնայած 1968թ. փետրվարին Սանայի շրջափակումն ավարտվեց, հանրապետականների շրջանում չէին դադարում տարաձայնությունները: Արդյունքում հանրապետական ձախերը բռնությունների ենթարկվեցին: Բնական է, որ Հյուսիսում տեղի ունեցող դեպքերին Հարավը չէր կարող չարձագանքել: Նշենք, որ ԵԱՀ-ն ճանաչել էր և ողջունել Հարավային Եմենի անկախությունը[3]: Ի պատասխան Հարավային Եմենի կառավարությունում ստեղծվել էր Եմենի միասնության հարցերի նախարարություն[4]: Սակայն Եմենի երկու հատվածների միջև տարաձայնության առաջին նշաններն ի հայտ եկան, երբ Ազգային Ճակատը Հյուսիսում սկսեց պաշտպանել հանրապետական ձախերին, որը դարձավ Եմենի երկու հատվածների ղեկավարների միջև ծայր առած անվստահության պատճառ: Սակայն հետագա իրադարձությունները փոխեցին քաղաքական և տնտեսական զարգացումների ընթացքը: Ադենում 1969թ. հունիսի 22-ի Ազգային Ճակատի ձախ ուժերը գահընկեց արեցին Կահտան աշ-Շաաբիին և գրավեցին իշխանությունը*, որ հայտնի է «հունիսի 22-ի բարեփոխումների շարժում» անունով: Հարավային Եմենը հայտարարեց մարքսիզմ-լենինիզմի բոլոր հիմունքներով առաջնորդվելու մասին[5]:

Չնայած առկա հակասություններին՝ 1970թ. նոյեմբերի 25-26-ը Թաիզում երկու կողմերի ղեկավարները համաձայնության եկան ֆեդերալ միություն ստեղծելու հարցում: Սակայն երկու համակարգերի միջև տարբերություններն այնքան ակնհայտ էին, որ անհնարին էին դարձնում հաշտությանն ու միասնությանն ուղղված բոլոր ձեռնարկումները: Իրավիճակն ավելի պայթունավտանգ դարձավ ընդդիմադիր կեցվածք ունեցող եմենցի 65 շեյխերի սպանությունից հետո[6]:

Կողմերի միջև վիճելի հարցերը կարգավորելու միջնորդական առաքելությամբ հանդես եկավ Արաբական Պետությունների Լիգան /ԱՊԼ/[7], որի

---

*1950-ական թվականների երկրորդ կեսին Եմենի երկու հատվածներում կազմավորվեցին արաբական ազգայնական շարժման մասնաճյուղեր: Ազգայնականները հանդես էին գալիս արաբական պետությունների ազատագրության, արաբական միասնության և համագործակցության կոչերով: 1963թ. ծմռանը Սանայում տեղի ունեցավ Հարավի հայրենասիրական ազգայնական ուժերի կոնֆերանս, որտեղ որոշվեց ստեղծել Ազգային Ճակատը՝ Եմենի հարավային հատվածում սկսված ազգային-ազատագրական պայքարը ղեկավարելու համար:

*Նախագահի պաշտոնի իրավասությունն ընկած էր Նախագահական Խորհրդի վրա, որի երեք անդամներն էին Սալիմ Ռուբեյա Ալին /նախագահ/, Աբդ ալ-ֆաթթահ Իսմայիլը և Մուհամմադ Ալի Հեյսամը:

շրջանակներում հոկտեմբերի 28-ին ստորագրվեց Եմենի միավորման մասին Կահիրեի պայմանագիրը[8]: Պայմանագիրը նախատեսում էր երկու պետությունների հավասար թվով ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովների ստեղծումը, որոնք պետք է մշակեին ապագա պետության սահմանադրության ու միասնական օրենսդրության նախագծերը, ներքին և արտաքին քաղաքականությունը:

1972թ. նոյեմբերի 28-ին Տրիպոլիում Լիբիայի նախագահ Մուամմար Կադդաֆիի հովանավորությամբ Եմենի երկու նախագահները ստորագրեցին Տրիպոլիի միասնության պայմանագիրը, որը նախատեսում էր միասնական Եմենի՝ Եմենի Հանրապետության ստեղծումը Սանա մայրաքաղաքով[9]:

Ուսումնասիրողների կարծիքով՝ Տրիպոլիի պայմանագիրը Հյուսիսի տեսանկյունից ժամանակավոր զինադադար էր, որ ավարտվելու էր Ադենի հետ զինված բախումով: Հարավի տեսանկյունից պայմանագիրը հնարավորություն էր տալիս շարունակել սոցիալական և տնտեսական բարեփոխումները[10]:

1973թ. աշնանը երկու պետությունների միջև հարաբերությունը նոր փուլ թևակոխեցին: Սեպտեմբերի 4-ին Հյուսիսային Եմենի նախագահ Աբդ առ-Ռահման ալ-Արիանին և Հարավային Եմենի նախագահ Սալիմ Ռուբեյա Ալին Ալժիրում Չմիացող երկրների շարժման շրջանակներում քննարկեցին կողմերի միջև հարաբերությունների բարելավման, ինչպես նաև համատեղ հանձնաժողովների աշխատանքը: 1973թ. սեպտեմբերի 9-ին նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ: Անհրաժեշտ համարվեց դադարեցնել Եմենի տարածքում զինավարժությունները, դիվերսիոն գործողություններն ու ռազմական ճամբարների գործունեությունը[11]:

1973թ. նոյեմբերի 10-ին Հարավային Եմենի նախագահ Սալիմ Ռուբեյա Ալին առաջին անգամը լինելով այցելեց Հյուսիս: Թաիզում երկու նախագահները համաձայնեցին միասնական ազգային տնտեսության բնագավառում մշակել համատեղ ծրագրեր: Հաջորդ օրը նրանք այցելեցին ալ-Հոդեյդա, որտեղ քննարկվեցին համատեղ հանձնաժողովների աշխատանքները[12]:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ բանակցությունների ընթացքում երկու պետությունների միավորման, ինչպես նաև սահմանադրության նախագծի մշակման հարցերն առաջնահերթություն չունեին ի տարբերություն փախստականների վերադարձի, սահմանային բախումների, բանտարկյալների ազատ արձակման և լրատվական պատերազմի դադարեցման հետ կապված չորս հիմնահարցերի[13]:

Միևնույն ժամանակ պետք է ընդգծել, որ համակարգերից յուրաքանչյուրի որդեգրած ուղին խորթ էր մյուսի համար: Ադենում Ազգային ճակատի

իրականացրած սոցիալական ուղղվածություն ունեցող արմատական բարեփոխումներին, մասնավորապես ազգայնացմանը, Սանան կասկածամտությամբ էր վերաբերվում և անհամատեղելի համարում միությունը Հարավի հետ: Սոցիալիստական ուղիով ընթանալ Հյուսիսի համար նշանակում էր կորցնել մասնավոր սեփականության ոլորտում ձեռք բերած նվաճումները: Հյուսիսը հարմար առիթ էր փնտրում խափանելու միասնության հանձնաժողովների աշխատանքն ու դադարեցնելու երկխոսությունը Ադենի հետ: Հարավային Եմենի Հանրապետական Խորհրդի անդամ և հայտնի ցեղապետ շեյխ Մուհամմադ Ալի Օսմանի սպանությունը Թաիզում 1974թ. մայիսի 3-ին բավարար հիմք դարձավ Սանայի համար Ադենին մեղադրել քաղաքական սպանությունների մեջ և դադարեցնել բանակցությունները Եմենի համատեղ հանձնաժողովների հետ[14]:

Եմենի միավորումը զինված ճանապարհով իրականացնելու Սանայի կոչերը նոր թափ ստացան: Եմենի երկու հատվածներում վերստին հնչեցին տեղեկատվական պատերազմի պահանջներ: Սակայն Հյուսիսում 1974թ. փոխգնդապետ ալ-Համդիի իշխանության գալուց հետո երկու երկրների հարաբերություններում դրական տեղաշարժեր նկատվեցին: Դադարեց տեղեկատվական պատերազմը, Սանան Ադենին կոչ արեց բանակցություններ սկսել հանուն իրական միանության[15]:

Չնայած հարաբերությունների բարելավմանը՝ 1977թ. ձմռանը երկու պետությունները վերստին հայտնվեցին պատերազմի շեմին, երբ սահմանային Կոտուբա քաղաքի մոտ բախումներ տեղի ունեցան: Իրավիճակը կայունացավ միայն երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների՝ Սալիմ Ռուբեյա Ալիի և Իբրահիմ ալ-Համդիի 1977թ. փետրվարի 15-ին Կոտուբայում կայացած դռնփակ հանդիպումից հետո, որին հաջորդեց երկու երկրների կառավարության անդամների ընդլայնված խորհրդակցությունը: Այս հանդիպումը (որտեղ որոշվեց ստեղծել Եմենի Բարձրագույն Խորհուրդ՝ զբաղվելու փոխադարձ հետաքրքրություն ունեցող հարցերով և հանձնաժողովներով) նպատակ ուներ դիմագրավել երկկողմ անհամաձայնություններն ու վերացնել դրանց առաջացման պատճառները[16]: Կոտուբայի պայմանագիրը եմենական առաջին նախաձեռնության արդյունք էր, որ մատնանշում էր միասնական արտաքին քաղաքականության միջոցով Եմենին սպառնացող վտանգների դեմ պայքարելու կողմերի ցանկությունը:

1977թ. հոկտեմբերին Ադեն մեկնելուց մեկ օր առաջ սպանվեց ալ-Համդին: Ադենում նա պետք է ավարտին հասցներ Եմենի միասնության նախագծի մշակումը, որի հիմքերը դրվել էին Կոտուբայում: Ալ-Համդիի

սպանությունը կապեցին Եմենի միասնությանը, բարենորոգումներին և ներքին կայունությանն ընդդիմադիր ուժերի դավադրության հետ:

Ալ-Համդիի սպանությունից հետո Հյուսիսային Եմենի իշխանությունը ստանձնեց փոխգնդապետ Ահմադ Հուսեյն ալ-Ղաշիմին, որը 1978թ. դարձավ երկրի նախագահ: Սանան հայտարարեց, որ մտադիր է Հարավի հետ հասնել հարաբերությունների բարելավմանը: Սակայն երկու պետությունների միջև աստիճանաբար բարելավվող հարաբերությունները նորից խաթարվեցին այս անգամ ալ-Ղաշիմիի սպանության հետևանքով, որը 1978թ. հունիսին 22-ին դարձավ ահաբեկչական գործողության զոհ: Նա սպանվեց հարավեմենցի էմիսարի պայուսակում տեղադրված ռումբի պայթյունից, որը հիմքը ընդունելով՝ Սանան Ադենի դեմ քարոզարշավ սկսեց՝ մեղադրելով նրան իր երկրի ներքին գործերին միջամտելու և ծախերին պաշտպանելու մեջ:

Ալ-Ղաշիմիի սպանությունը և դրան հաջորդած դեպքերի արձագանքներն արաբական երկրներում և ողջ աշխարհում նպաստեցին Հարավում հանուն իշխանության սկսված պայքարին Ազգային ճակատի երկու թևերի միջև, որոնք ներկայացնում էին Սալիմ Ռուբեյա Ալին և ճակատի գլխավոր քարտուղար Աբդ ալ-Ֆաթթահ Իսմայիլը: Վերջինիս հաջողվեց կարճ ժամանակամիջոցում ժողովրդական ոստիկանության և բանակի, ինչպես նաև Խորհրդային Միության աջակցությամբ վերացնել իր քաղաքական հակառակորդներին: Այս հանգամանքները թույլ տվեցին շրջանառության մեջ դնել այն վարկածները, որ թե՛ ալ-Ղաշիմիի սպանության և թե՛ հեղաշրջման կազմակերպիչը Աբդ ալ-Ֆաթթահ Իսմայիլն էր, որ նպատակ ուներ կասեցնել Եմենի երկու հատվածներում ընթացող գործընթացները և Սաուդյան Արաբիայի և Արևմուտքի հետ ավելի սերտ կապերի հաստատումը[17]:

Ալ-Համդիի և ալ-Ղաշիմիի սպանությունների հետևանքով երկու երկրների հարաբերություններում առկա լարվածությունն ավելի խորացավ: Երկուստեք իշխանությունները վերահաստատեցին կապերը կողմերի ընդդիմադիր կառույցների հետ: Դեպքերի նման զարգացման համար ոչ պակաս նշանակություն ունեցավ արտաքին միջամտությունը[18]: Ալ-Ղաշիմիի սպանությունը հանգեցրեց Ադենի նկատմամբ արաբական բոյկոտին և պատժամիջոցներին[19]:

Շուտով երկու երկրները նորից կանգնեցին զինված բախման սպառնալիքի առաջ, որը խթանեցին ներքաղաքական գործընթացները: 1978թ. հուլիսի 17-ին Հյուսիսում իշխանության եկած Ալի Աբդալլա Սալիհը հայտարարեց, որ Ադենի հետ հարաբերությունները թեակոխում են ռազմական նոր փուլ[20]: Իսկ Ադենում Աբդ ալ-Ֆաթթահ Իսմայիլը փորձեց կասեցնել Սանայի և

Արաբական թերակղզու երկրների հետ հարաբերությունների բարելավումը՝ 1978թ. հունիսին տապալելով և մահվան դատապարտելով Սալիմ Ռուբեյա Ալիին*:

1979թ. փետրվարի 24-ից մինչև մարտի սկիզբը երկու երկրների միջև սկիզբ առած երկրոդ զինված բախմանը նպաստեցին տարածաշրջանի քաղաքական զարգացումները: Իրանի իսլամական հեղափոխությունից և շահի տապալումից հետո ԱՄՆ-ը կորցրեց Մերձավոր Արևելքում իր կարևորագույն հենակետը, որի հետևանքով տարածաշրջանում ԱՄՆ-ի դաշնակիցները, մասնավորապես Սաուդյան Արաբիան, սկսեցին կասկածամտությամբ վերաբերվել իրենց վարչակարգերին սատարելու ԱՄՆ-ի կարողությանը: Այս հանգամանքները նպաստեցին Խորհրդային Միության և նրա դաշնակիցների, այդ թվում՝ Հարավային Եմենի դերի ապագա մեծացմանը: Ի պատասխան ԱՄՆ-ը փորձեց նոր դաշնակիցներ գտնել տարածաշրջանում՝ ապացուցելու իր կենսունակությունը Մերձավոր Արևելքի կայունության և նավթային շահերի պաշտպանության հարցում: Արդյունքում Հյուսիսային Եմենը սպառազինվեց Հարավային Եմենի հետ պատերազմի ընթացքում Արաբական թերակղզում դիմակայելու, ինչպես նշված էր ամերիկյան հայտարարության մեջ, Խորհրդային Միության ազդեցությանը[21]:

Երկու Եմենների միջև սկիզբ առած ճգնաժամը վերացնելու նախաձեռնությամբ հանդես եկան արաբական շրջանակները: 1979թ. մարտի 4-6-ը Քուվեյթում արաբական երկրների արտգործնախարարների արտահերթ հանդիպման ընթացքում ստորագրվեց կրակի դադարեցման և երկու երկրների միջև տարածայնությունների կարգավորման մասին պայմանագիրը, որ պիտի գործեր 1979թ. մարտի 3-ից[22]:

Միասնության ծրագիրը հրատապ լուծում էր պահանջում երկու կողմերի համար էլ[23]: 1979թ. մարտի 28-30-ը Քուվեյթում գումարվեց երկու երկրների ղեկավարների գագաթնաժողովը, որտեղ ստորագրվեց երկու պետությունների միավորման նախագծի վերաբերյալ հինգ կետից կազմված պայմանագիր[24]: Քուվեյթի պայմանագիրը, որ սահմանում էր միասնական աշխատանքի ծրագիրը և պարտականությունները[25], խարսխվեց Կահիրեի և

---

*Գոյություն ունեցող մեկնաբանությունների համաձայն՝ Սալեմ Ռուբեյա Ալիից ազատվելը նպատակ ուներ վերջնականորեն որդեգրել խորհրդային տիպի մարքսիստական ուղեգիծ, որին նա դեմ էր: Վերջինս հրաժարվել էր ԽՍՀՄ-ի հետ բարեկամության պայմանագիր ստորագրել՝ փոխարենը կապեր հաստատելով Չինաստանի հետ: Սալիմ Ռուբեյա Ալին զարգացման չինական մոդելի կողմնակից էր:

Տրիպոլիի պայմանագրերի վրա[26]: Այս հանգամանքը մատնանշում է, որ չնայած անցյալում երկու վարչակարգերի միջև եղած հակասություններին, միասնության հարցի նկատմամբ նրանց դիրքորոշումն անփոփոխ էր: Այդ է վկայում նաև 1979թ. մարտի 29-ին Քուվեյթում Հյուսիսային Եմենի նախագահի հետ հանդիպման ժամանակ Հարավային Եմենի նախագահ Աբդ ալ-Ֆաթթահ Իսմայիլի հայտարարությունը հրաժարական տալու իր պատրաստակամության մասին: Այդպիսով հնարավորություն էր տրվում Հյուսիսային Եմենի նախագահ Ալի Աբդալլա Սալիհին դառնալ միասնական Եմենի նախագահ և հաղթահարել միասնության հետ կապված խոչընդոտները: Քուվեյթի պայմանագրի միջոցով երկու Եմեններին հաջողվեց ոչ միայն պատերազմական վիճակից անցնել երկխոսության, այլև իրատեսորեն քննարկել Եմենի միավորման ծրագրերը: Կողմերն ի վերջո համոզվեցին, որ հակամարտությունը ոչ միայն որևէ արդյունք չի տվել, այլև հանգեցրել է մարդկային և նյութական մեծ կորուստների, հարուցել գաղթականների, ինչպես նաև տնտեսական խնդիրներ, խոչընդոտել երկու երկրների զարգացմանը: 1980-ականներին երկու հատվածների իշխանությունները գիտակցեցին, որ այլ ելք չունեն՝ քան որևէ կառույցի մեջ միավորվելը: Քուվեյթի պայմանագրի շնորհիվ, թեև տևական գործընթացի արդյունքում, 1990թ. Եմենի երկու հատվածներին ի վերջո հաջողվեց միավորվել:

Պետք է նկատի ունենալ, որ ազգային-ազատագրական շարժման զարթոնքի պայմաններում 1960-ական թվականներից եմենական հասարակությունն ընդհանրապես Հյուսիսում թե Հարավում երկու Եմենների արտաքին և ներքին քաղաքական բազմաթիվ դժվարությունները բացատրում էր միասնության բացակայության հանգամանքով, ինչի հետ հաշվի չէր կարող նստել որևէ քաղաքական ուժ: Փաստորեն, միասնության գաղափարը 1960-ականներից մինչև վերջնական միավորում դարձել էր Եմենի հասարակական գիտակցության լեյտմոտիվը:

Գրականություն

1. Մուհամմադ Սայիդ Աբդալլա, Ադենի ժողովրդի պայքարը և իմպերիալիստական պատմությունը, Բեյրութ, 1989, էջ 234 (արաբերեն):
2. Հասան Ահմադ Աբու Տալիբ, Պայքարը երկու Եմենների միջև. արմատներն ու զարգացումները, Կահիրե, 1979, էջ 80 (արաբերեն):
3. Սալիհ ալ-Ակադ, Հարավային Եմենը և արմատական առաջընթացը ցեղային հարաբերություններում, Միջազգային քաղաքական ամսագիր, թիվ 31, Կահիրե, 1973, էջ 73-74 (արաբերեն):
4. Վիտալի Նաումկին, Ազգային ճակատը Հարավային Եմենի անկախության պայքարում, Մոսկվա, 1984, էջ 213-214 (արաբերեն):
5. Խալիդ Իբն Մուհամմադ ալ-Կասիմի, Եմենի միասնությունը ներկայում և ապագայում, Բեյրութ, 1987, էջ 73-75 (արաբերեն):

6. Մուհամմադ Մուհսին ազ-Զահիրի. Եմենում ցեղերի քաղաքական դերը, Կահիրե, 1996, էջ 161 (արաբերեն):
7. Բուտրոս Բուտրոս Ղալի, Արաբական Պետությունների Լիգիան և տարածաշրջանային հակամարտությունների կարգավորումը, Կահիրե, 1977, էջ 158-160 (արաբերեն):
8. Հասան Ահմադ Աբու Տալիբ, նշվ. աշխ., էջ 83:
9. Եմենի Հանրապետություն: Մեկ Եմեն: Եմենի միասնության վերաբերյալ փաստաթղթերը (4), Սանա, 1990, էջ 42 (արաբերեն):
10. Եմենի միասնության փաստաթղթերը, Սանա, 1979, էջ 26 (արաբերեն):
11. Խալիդ Իբն Մուհամմադ ալ-Կասիմի, Եմենի միասնությունը ներկայում և ապագայում, Բեյրութ, 1987, էջ 110-11 (արաբերեն):
12. Ահմադ Իբրահիմ ալ-Իբրաշի, նշվ. տեղում, էջ 32:
13. Մուհամմադ Ահմադ ալ-Աշմուլի, Ժամանակակից Եմենի պետության քաղաքական պատմությունը 1838-2001թթ., Կահիրե, 2002, էջ 135 (արաբերեն):
14. Սամիր Մուհամմադ Ահմադ ալ-Աբդալի, Եմենի միասնությունը և արաբական տարածաշրջանային համակարգը, Կահիրե, 1997, էջ 54 (արաբերեն):
15. Հասան Ահմադ Աբու Տալիբ, նշվ. աշխ., Կահիրե, 1979, էջ 84 (արաբերեն):
16. «աս-Սաուրա», 17.07.1979, Սանա (արաբերեն):
17. Հասան Ահմադ Աբու Տալիբ, նշվ. աշխ., էջ 85-86:
18. Սարուա Մաքքի, Վերջին զարգացումները երկու երկրներում, Միջազգային քաղաքական ամսագիր, Կահիրե, 1978, էջ 171 (արաբերեն):
19. Խալիդ Իբն Մուհամմադ ալ-Կասիմի, նշվ. աշխ., էջ 92:
20. Հասան Ահմադ Աբու Տալիբ, նշվ. աշխ., 87:
21. Խալիդ Իբն Մուհամմադ ալ-Կասիմի, նշվ. աշխ., էջ 93-94:
22. Աբդ ալ-Համիդ ալ-Մուաֆի, Հակամարտությունը Եմենի երկու հատվածների և Քուվեյթում Արաբական Պետությունների Լիգայի համագումարը, Միջազգային քաղաքական ամսագիր, թիվ 56, Կահիրե, 1979, էջ 165-166 (արաբերեն):
23. Հասան Ահմադ Աբու Տալիբ, նշվ. աշխ., էջ 91-92:
24. Աբդ ալ-Համիդ ալ-Մուաֆի, Միասնության դրդապատճառները և երկու Եմենների միջև բախման պատճառները, Միջազգային քաղաքական ամսագիր, թիվ 57, Կահիրե, 1979, էջ 88 (արաբերեն):
25. Մուհամմադ Ահմադ ալ-Աշմուլի, նշվ. աշխ., Կահիրե, 2002, էջ 142-143:
26. Խալիլ իբն Մուհամմադ ալ-Կասիմի, Բեյրութ, 1987, էջ 100-102: